

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՅ

(Անտիպ Թատերգութիւն. հանեալ 'ի Հատարեաց Գրասանէն Վենետկոյ):

(Տես Հատոր Իբ. էջ 329):



ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀՌԻՓՍԻՄԵ. ԶՆՈՒՈՐԳ

Հռիփսիմէ. (Զոր կապեալ քարչէն զինուորք):

Ոչ պիտոյ է զիս քարչել, ցընծալով վազեմ,
Առ արքայն մատչիլ 'ի վաղուց փափաքեմ:
Գերազանց փեսայ, օգնեա քում հարսին:

Զինուորք.

Ընդ վայր կոչեա, ընդ վայր խօսիս.
Հարիւր հազար փեայք չկարեն ազատել.
Այսօր պարտ է քեզ կամ աստուածոցն զոհել
կամ մեռանիլ, յետ անհամար տանջանաց:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՀՌԻՓՍԻՄԵ. ԿՐԻՆ, ԶՆՈՒՈՐԳ

Կարէն.

Զինչ աստ լսեմ. գողք, կացէք 'ի բաց,
Եթէ . . . :

Զինուորք.

Արքային ծանօթ է հրաման,
Կապել անխտիր որ քրիստոնէական
Օրինաց քրիստոսի հետեի. զսա դտաք 'ի հնձանս
Որ առաջի խաչին ընդ այլ կուսանս
Անհոգ զիւլթէր:

Կարէն.

Ի բաց կացէք, ասեմ,
Լիրբք, և զշղթայս հանէք: Թող, խնդրեմ, (առ Հռիփսիմէ)
Ազնիւ տիրուհի, տղէտ արբեցողաց:
Ինքն է Հռիփսիմէ. ամենայապլթ աչաց (ինքն ինքեան ասէ)
Զօրութիւն զգամ:

ՊԵՍԱ Ա.

Հնիփսիմէ. Չիարդ և իցես,
 Պարոն, քան զնոսա ինձ անողորմ ես.
 Թող թէ կատարեմ զարքային հրամանս,
 Թող թէ կատարեմ զհին իմ փափագանս.
 Առ Տրդատ ածէին, զոր և ինդրեմ.
 Գու՛թ աստ անպիտան է:

Կարէն. ՉՏրդատ կարծեմ
 Չճանաչես:— ՉՏրդատ եթէ նա սիրէր: (Յեոյ զայս յինքեան ստէ)

Հնիփսիմէ. Չճանաչեմ. ապա անծանօթ ինձ լինէր
 Թշնամին Աստուծոյ, դժխոց սպասաւոր,
 Սպանող Գրիգորի, գարշելի բռնաւոր:
 Չճանաչեմ. համբաւ մեծ է նորա դործոյ:

Կարէն. Չարմանամ, սիրտ է մեծ Հոօմայեցոց.
 Իսկ . . . :

Հնիփսիմէ. Իսկ իմանամ զպատճառ հառաչանաց.
 Ինձ քրիստոնէի երկիւլ 'ի տանջանաց
 Կարծես թէ պարտ է. որ Հոօմայեցի
 Ի սրտէ ճանաչես, ծանիր քրիստոնէի
 Չսիրտ, աստուածային զօրութեամբ ամուր
 Գիտասիր:

Կարէն. Թէ զբանս կարեմ, թոյլ տուր,
 Գեղ աստ ստուգապէս պիտոյ է երկընչիւ.
 Լաւ էր քեզ հեռանալ, լաւագոյն փախչիւ,
 Յանողորմ արքայէն զոր լաւ ճանաչես:
 Հեռի ոչ է սուն իմ, կառ անդ գտիցես,
 Չիս ևս պատրաստ. և եթէ իշխան
 Թէպէտ արիւնակից Տրդատոյ, քեզ արեան
 Թուի ընկեր լինել:

Հնիփսիմէ. Պահեսցէ Աստուած,
 Հատուցէ զփոխարէն քեզ, իշխան ողորմած.
 Ընկերք առ 'ի փախչիլ' ինձ անպիտանք են,
 Առ 'ի մեռանել' յաւէտ, թէ մաղթանք իցեն
 Լուեալ Աստուծոյ:

Կարէն. Իսկ զայ թագաւոր: (Յեոյ ինքն յինքեան ստէ)
 Չարեբաղզ կարէն, զինչ առնել հարկաւոր է:

ՏԵՍՍՐՈՆ Գ.

ՏՐԴԱՏ. ՀՌԻԹՈՒԾԻ. ԿԱՐԷՆ, ՏԻԾՍԱ

Տրդատ. Հայասէր աստուած, գեղեցիկ կոյս, զքեզ ո՛վ ածեաց
 Առ 'ի մեր յերկրի: Դու, կարէն, նայեաց,
 Թէ նախագաղափարս նրման է պատկերի.
 Չիարդ զմեծն Հոօմայ թողեր զանասելի
 Չփափկութիւնս, և մեր ձիւնապատ լերանց
 Խոնարհեցար այց առնել:

Հոփսիսիմէ.

Գերազանց

Արքայիցն արքայն, Տըրդատայ թագաւոր,
Առ քեզ ուղարկէ զիս. իմացար, բռնաւոր,
Չի ամօթ առնիցեմ, և . . . :

Տրդատ.

Է անրզգամ,

Թէպէտ գեղեցիկ. կայսր՝ է բարեկամ,
Իսկ չէ իմ արքայ. զիարդ և իշխես
Սպառնալ թագաւորին, որ անծանօթ ես,
Յորժամ զքեզ արքայ խոնարհեալ պատուէ:

Հոփսիսիմէ.

Առ քեզ դարձցի պատիւս, զի ինձ անհաւատէ

Գարշելի է պատուիլ: Արդ մի զարմանար
Թէ զքեզ անարգեմ. մի ևս հաւատար
Թէ անուն կայսեր զամ աստ: Բարեկամ
Չի քո է, 'ի հարկէ՝ իմ է չարեկամ.
Չանաստուածն սիրել ոք ոչ կարէ,
Եթէ զծառայս Աստուծոյ ոչ ատէ:
Գող հաճոյ է գողին, սիրեն զմիմեանս,
Չի դուք զործակից էք, նման խնդրէ զնմանս:
Ի յանուն Աստուծոյ, տիեզերաց արարչին
Անբաւ, անճառելի, ամենակարողին,
Որ քոց ահ է զիւաց, աւերիչ կռոց,
Երկնից թագաւոր, յաղթող դժօխոց.
Գամ քեզ աղբ առնել, թէ առ Տէր յերկրէ՝
Սրբազան Գրիգորի արիւնն աղաղակէ.
Չոր, անօրէն, հեղեր՝ ընդ անթիւ չարչարանս:
Երկիր, բռնաւոր, արժան ես անուանս,
Երկիր՝ զի հասեալ է ժամ քոց պատժոց.
Կամ թողեալ զգիսն, ճշմարիտ Աստուծոյ
Հնազանդ, խընդրեա զքաւութիւն մեղաց:
Կարէն, ուր է սիրտ իմ, ընդդէմ հայհոյանաց
Սովորական նախանձ ուր է. սպառնայ, կանչէ,
Էւ ես համբերեմ. երդնում, Ափրողիտէ,
Պատճառ ես այս յանցանաց. քո որդի
Չիս կապեաց. խնդրեմ, ազնիւ իշխանուհի,
Հոփսիսիմէ:

Տրդատ.

Ճանաչես:

Չքեզ ինքն ճանաչես.

Որպէս վայել է քեզ, խօսիր և գործես.
Մի առներ՝ թէ համբեր Տրդատ. իբր անծանօթ
Չքեզ համարեսցէ. խորհեաց զինչ է ամօթ.
Յարբունական տոհմէ կուսին՝ քրիստոսն էից
Ստուծեանց լսել:

Հոփսիսիմէ.

Ո՛վ Հայր, յանէից

Ստեղծող տիեզերաց, ուր ես վրէժխնդիր.
Հուր, կայծակ, բոց, և դու երկիր,
Օդ, տարերք, ծովք, զիարդ անչարժ տեսանէք
Չնախատինս Տեսան ձերոյ. և ուր էք
Հրեղէնք Աստուծոյ սպասաւորք:

- Տրդատ . Զի սիրեմ՝
Ասասցուք յայտնի , Հռիփսիմէ , համբերեմ՝ .
Իսկ մի տար պատճառ հայհոյիչ , քլճալի ,
Թէպէտ սէր իցէ հզօր . . .
- Հռիփսիմէ . Արիւնարրու Տրդատ , որ զԱստուած առէ ,
Սիրէ զիս : Ո՛վ երկինք , որ քեզ հաճեցան ,
Ինք աստ հանէի զաչս մեղանչական ,
Թէ թոյլ տար քրիստոս . միշտ Հռօմայեցի
Պարտի մեղս համարիլ , հաճիլ բունաւորի :
- Տրդատ . Յաւէտ առէք զլոյս , ո՛վ այք զօրեղք ,
Ի բաց հանէք զիսաւար՝ լուսատուք աստեղք .
Զաստուածս ծանիր , լից առատութեամբ ,
Վերնային պարգեւաց . մի լինիր ապրստամբ
Տերանց սիրողաց :
- Հռիփսիմէ . Տուր հրաման ածիլ
Ի տաճարն նոցա , պարտ է հնազանդիլ
Տերանց սիրողաց , զնոսա հատուտապէս
Կարացես յերկիրպաղեւ խոնարհապէս :
- Տրդատ . Լուեալ ես , կարէն . ձայն երկնաւոր
ԶՏրդատ յարուցանէ . փոխունի հրաշաւոր .
Զհարկ կարեմ՝ կոյս , զոհանալ ըզքէն ,
Վասն անչափ ձրիս :
- Կարէն . (Մեռիր անյոյս , կարէն ,
Տրդատայ է կոյս) .
- Տրդատ . Թագ և սիրտ իմ
Առ ոտս քո դնեմ , ընկալ . պաղատիմ ո՛վ արժան
Փեսային աստուածայնոյ :
- Հռիփսիմէ . Ոչ դք մարդ կարէ գոյ արժան Աստուծոյ .
Արդ լաւ է առ տաճարն երթալ , զի շեմեռանդն
Կամքս զոր ես ունիմ , նշանակեն թէ անդ
Շատ առնելոց եմ :
- Տրդատ . Լաւ , իմ զշխուհի .
Իսկ թոյլ տուր առաջ թէ վասն տօնի
Քան զոր ոչ երբեք ետես վաղարշապատ ,
Զարդարեացին փողոցք , տաճարք . և Տրդատ
Ինքն որոց պարտ է հարսանեաց
Զհրամանս տացէ . դուք գնացէք քրմաց
Ազդ առնել զբանս . զոհս հանդիսականս
Պատրաստ արացենն , յայս ՚ի յապարանս
Կարացուք սպասել :
- Հռիփսիմէ . Գնա՛ , ես հետեիմ .
Ընդ զիս քո ցընծա , դու տեսցես զգործս իմ :

ՏԵՍԱՐԱՆ Գ .

ԿԱՐԵՆ . ՏՐԴԱՏ

Կարէն . Զինչ առնեմք , Տիմաս , չկարեմ իմանալ ,

Թէ պտրտ է տրտմիլ կամ յաւէտ լօրնգալ .
 Սիրտ իմ ոչ կամի զյոյս իւր հանել .
 Եւ թէպէտ Տրդատ առ զոհս մատուցանել
 Ածէ զկոյս 'ի տաճարն , և 'ի նոյն ժամ
 Չհարսանիս առնել կամի , ես յուսամ ,
 Թէ այսպէս շուտ նա ոչ ընկայցի
 Չոր ինչ ցանկանայ . սիրտ Հռօմայեցի'
 Չփոխի այսպէս : Ի սաստիկ յայտնելոյ
 Առ սէր՝ ճանապարհ է հեռի :

Տիմաս .

Քրիստոնեայ

Մնայով կոյս՝ անհնար է թէ նա
 Անահտայ 'ի տաճարն զոհեացէ .
 Չմնացորդն առնել Տրդատայ , զիւր է :
 Եթէ թողու զիւր խարէական կտրծիսն ,
 Ոչ անարգեսցէ զարքային հարսանիսն ,
 Արփիափայլ է թագ անահտական աչաց :

Կարէն .

Չազգն քրիստոնէից չգիտես . զիմակաց
 Լինին ինքեան մահու առաջ քան փոփոխիլ .
 Արհամարհեն զտանջանս , զպատիւն . որ ինչ հաճիլ
 Սոփոր է մարդկան , ընդ ոտիք կոխեն .
 Որ է ժամանակեայ՝ ոչ ինչ է , ասեն ,
 Մեք զյաւիտենականս խընդրեմք . և այսպէս
 Որ ինչ յուսայ Տըրդատ՝ յուսայ անհիմնապէս :
 Առ տաճարն գնայ կոյսն :

Տիմաս .

Կարէն .

Եւ առ տաճար գնալ

Ո՛չ է հաւատացիր՝ զիւր զՔրիստոսն ուրանալ :
 Չոհեսցէ Անահտայ :

Տիմաս .

Կարէն .

Ինքն Անահիտ գիտէ ,
 Չինչ 'ի մէջ տաճարին Հոիփսիմէ արացէ :
 Արացցեն աստուածքն , թէ մտանելն նորա
 Ոչ իցէ առ քակտել զպատկերն Անահտայ ,
 Եւ այլ աստուածոցն , որպէս բազումս տեսի
 Քրիստոնեայս առնել :

Տիմաս .

Պատուհաս հեռացի

Ի վաղարշապատէ : Արդ սակա քո սիրոյ ,
 Իշխան , զի՛նչ յուսաս :

Կարէն .

Ի յուսահատելոյ ,
 Խոստովանիմ , Տիմաս , սակաւ տարբերիմ ,
 Տրդատայ է կոյսն՝ թէ զոհէ . հաւանիմ .
 Անկարծ փոխումն նորա զկարէն սպանանէ .
 Ապա գոլ ամբարիշտ ինձ ակամայ պարտ է ,
 Եւ զՀոիփսիմէ արգելուլ զոհել ,
 Չի ժամանակ իցէ այլ ինչ որոնել :
 Չիս բռնադատէ սէր . վերնայինք թողցէք ,
 Լիցի կոյս ուղղափառ , իսկ այլ ուրեք ,
 Եւ այլ ժամանակ :

Տիմաս .

Տրդատ՝ որ երկնչի

Մի գուցէ Հոիփսիմէ դարձեալ փոխեսցի ,

Ջնա առ կատարումն բանին ընթացուցէ .
Եւս քրմապետ որ նախանձայրոյդ է ,
Փութացուցէ զոհին . ապա զինչ արասցես
Առ յարգելուլ զնոսա :

Կարէն .

Պարտ է թէ գիտացես
Թէ կոյսն ընկերս ունի թագչեալս 'ի հընձանս'
Ահիւ Տըրդատայ , երեսուն չորս կուսանս :
Ես առ նոսա գնամ , զբանն յայտնեմ .
Եւ որպէս աղջկան հաճոյ լինել՝ գիտեմ .
Մուծանեմ 'ի պալատ զմի 'ի նոցանէ ,
Որ հաստատ լինել զնա յորդորեսցէ .
Եւ այսպէս զերկուս շահիմ 'ի միանգամ :
Բարի թուի խորհուրդս :

Տիմաս .
Կարէն .
Տիմաս .
Կարէն .

Ուրեմն անդ ընթանամ :
Ընկեր չլինիմ :
Նորա երկընչէին :

Տիմաս .

Միայնակ երթամ մերձ թագաւորին
Չոր ինչ նոր լիցի՝ դու զգոյշ լեր գիտել .
Եւ ինձ փութով քարտիզիւ յայտնել :
Գլխոյս վերայ , իշխան . իսկ այսպէս արա՝
Թէ հնարս ծածկեալ իցէ 'ի Տըրդատայ :

Շարունակելի .

Ք Ե Ր Դ Ո Ւ Ա Մ Ք

Ղ Ա Ռ Ն Կ Ի Ա Ն Ո Ս Ե Ր Գ Զ Ի Կ Ա Ր Ն Ե Ց Ի Ո Ց



Ս Ա Մ Մ Ա Ն Ի Ք

Ա .

Թափուական շատ երկիրներ պըտըտեցի , չըխընտացի .
Զուր ջան ու անօգուտ վաստակ , միշտ ողբացի , չըխընտացի .
Իլժովսբ կայ արքայութիւն կայ՝ մըտածեցի , չըխընտացի .
Կեանքըս մեղօք եմ՝ անցուցեր , երբ յիշեցի՝ չըխընտացի :
Ո՛վ Կոյս մարուր , յաշխարհի մէջ ես միշտ լացի , չըխընտացի .
Տես , զըթա ինձ ծագիկ կեանքըս ձերացուցի , չըխընտացի :
Մայր զըթած ես , չըստի՛ր՝ թէ ես քեզ զիմեցի՝ չըխընտացի .
Տէ՛ , խընտացուր Ղունկիանոսին , որ զին գացի չըխընտացի :